8.22 Մինչև պայմանագրի կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարությունն պայմանագրի կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագրի կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարությունն անգործություն ժամկետի վերաբերյալ:

8.23 Անգործության ժամկետը պայմանագրի կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագրի կնքելու իրավասությունն առաջացրած օրվամիջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի է, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագրի կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագրի կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագրի կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագրի առոչինչ է:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագրի կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագրի կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթղթի կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրի կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագրի կարող է կնքվել ոչ 2 ուշ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.23 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագրի կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագրի կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագրի ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրան ներկայացման գրույթում և հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրույթում ամբողջությամբ ընտրված մասնակցին:

9.5 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնության ամբողջությամբ, կարող են պայմանագրի նախագիծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10.ՈՐԱԿՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՅՈՎՈՒՄՆԵՐԸ

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակցից պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին: Որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.1) կամ կանխիկ փողի ձևով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:¹

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակցից ընտրված մասնակցից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ու վերջինիս հետ կնքվող պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով՝ պայմանագրի ընդհանուր գնի չափով:

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով:¹³

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակցից ընտրված մասնակցից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ու վերջինիս հետ կնքվող պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով՝ պայմանագրի ընդհանուր գնի չափով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման

¹ Եթե գնման հայտով գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը, ապա բանկային երաշխիքի ձևով (հավելված 4)՝ բառերը փոխարիվում են՝ «միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.1) կամ կանխիկ փողի ձևով» բառերով:
¹³ Եթե գնման հայտով գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը, ապա բանկային երաշխիքի կանխիկ փողի ձևով՝ բառերը փոխարիվում են՝ «միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով» բառերով:

Ժամկետը լրանալու հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասուության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասությունը նա առաջացման պահին՝

- նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների մասով ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, իսկ հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

- նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 10 մլն. ՀՀ դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: 10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում իրավերի պայմաններին:

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:¹⁴

3) ոչ մի հայտ չի ներկայացվել:

4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարության ուն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՍ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

¹⁴Սույն կետը խմբագրվում է ըստ համապատասխան պատվիրատուի:

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործություններ) և որոշումները:

12.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործություններ) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեություն կարգը հաստատված է ՀՀ Ֆինանսների նախարարի 2018թվականի դեկտեմբերի 6-ի N600-Ն հրամանով.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործություններ) և որոշումները:

12.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագրի կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործություն ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

12.5 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետփոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.6 Բողոքը՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ներկայացվում է Հայաստանի Հանրապետության, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տաբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: 12.7 Բողոքը, այդ թվում՝ մասնակի, բավարարվելու մասին բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելու և հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքներ քննող անձը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետվերադարձվող գումարը: Լիազորված մարմնինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

12.8 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա այն ստանալու և հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ անձն այդ մասին գրությունով տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով երկու աշխատանքային օր ժամկետ արձանագրված թերունները վերացնելու համար: Գրությունները ելքագրվելու օրը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դրա բնօրինակից արտատպված

(սկանավորված) տարբերակը ուղարկում է նաև բողոքում նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 12.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

12.9 Բողոքը վարույթ ընդունելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ անձը բողոքը և դրավերաբերյալ հայտարարությունը, հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, հայտարարություն մեջ նշվում է բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերի նախնական հետևելու համացանցային հղումը: Բողոքը համարվում է վարույթ ընդունված արձանագրված թերութայնների վերացման վերաբերյալ սույն հրավերի 12.8 կետով նախատեսված ժամկետը լրանալու, իսկ թերութայնները վերացված բողոքը ներկայացվելու դեպքում, այն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրվելու օրվանից:

12.10 Բողոքը վարույթ ընդունվելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գրություն մե դիմում է պատվիրատուին՝ բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, ինչպես նաև բողոքի քննության և որոշում կայացնելու համար անհրաժեշտ՝ գրություններ նշված փաստաթղթերը ներկայացնելու պահանջով՝ կցելով բողոքի պատճենը և կից փաստաթղթերը՝ առկայության դեպքում: Բողոքի վերաբերյալ պատվիրատուի դիրքորոշումը և պահանջված փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվում են գրավոր կամ դրանց բնօրինակից արտատպված (սկանավորված) ձևով՝ սույն հրավերի 12.5 կետում նշված էլեկտրոնային փոստի ուղարկվելու միջոցով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատու և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12.11 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այն պիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատու և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.12 Բողոքի քննությունն իրականացվում և որոշումը կայացվում է բողոքը վարույթ ընդունվելու օրվանից ոչ ուշ քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված միջանկյալ որոշմամբ: Ընդ որում միջանկյալ որոշումը կայացնելու օրը գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ապահովում է դրա մասին համապատասխան հայտարարության հրապարակումը տեղեկագրում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

12.13 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,
բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ու ցակումներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

12.14 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.15 Բողոքի քննությունը բաց է հանրության համար: Բողոքի քննությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը ձայնագրվում են և բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում են տեղեկագրում: Ձայնագրման անհնարիսության դեպքում նիստերը սղագրվում: Նիստերը առցանց հեռարձակվում են և անհամացանցում:

12.16 Յուրաքանչյուր անձ, որը շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.17 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումն կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրը:

12.18 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.19 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն գնումների հետ կապված բողոքներ բողոքը քննող անձը կայացնում է գնման գործընթացի կասեցումը հանելու մասին որոշում, եթե օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարները, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարը զրավոր հայտնում է, որ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՄԱՍ II Հ Բ Ա Յ Ա Ն Գ Գ Ն Ա Ն Շ Մ Ա Ն Հ Ա Ր Ց Մ Ա Ն Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայ տերը, հայ երեսից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված`

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն` համաձայն հավելված N1-ի .

2.2 իր կողմից հաստատված` առաջարկվող ապրանքի ամբողջական կարագիրը` համաձայն հավելված N1.1-ի .

2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով .

2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).¹⁵

2.6 գնային առաջարկ` համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ` բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց` բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 (երկու) օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված` մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ` գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են`

- 1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն) .
- 2) գնանշման հարցման ծածկագիրը .
- 3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը .
- 4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

¹⁵ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող` մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

Հավելված N1
ՀՊՏՀ-ԳՀԱՊԶԲ-20/ԷԱ-2 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
գնանշման հարցման մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկությո՜ւն ունի
մասնակցել
մասնակցի անվանումը

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի
կողմից ՀՊՏՀ-ԳՀԱՊԶԲ-20/ԷԱ-2 ծածկագրով հայտարարված
գնանշման հարցման _____ չափաբաժնին
(չափաբաժնեներին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժնեների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ն հայտնում և հավաստում է, որ
հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:

երկրի անվանումը

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկվճարողի հաշվառման համարն է՝ _____ :

• Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____ :
Էլեկտրոնային փոստի հասցեն

• գործունեության հասցեն է՝ _____ :
գործունեության հասցեն

• հեռախոսահամարն է՝ _____ :
հեռախոսի համարը

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ՝

մասնակցի անվանում

1) բավարարում է ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/ԷԱ-2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակցից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

2) ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/ԷԱ-2 ծածկագրով գնանշման հարցման և մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

- բացակայում է հրավերով սահմանված՝ _____ -ին

մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____ -ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____ -ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություններին միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրոշյամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայտերի) ավելի քան տասն տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուներին մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիներին համար՝ նույն անվանացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտար երկրյա քաղաքացիներին համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

Կից ներկայացվում է _____

կողմից առաջարկվող
մասնակցի անվանումը

ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի :

_____ (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրողը (նունը)

Կ.Տ.

*Ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը :
**Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները : *Ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը :

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

_____ -և ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-
 20/ԷԱ-2

մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ
 չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող
 ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	անվանումը	տեխնիկական բնութագրերը

_____ (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
 ստորագրունը)

Կ.Տ.

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը տեղեկագրում
 հրապարակելը:

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ՀՊՏՀ -ԳՀԱՊՁԲ-20/ԷԱ-2 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.
 ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով /	Շահույթ /տառերով և թվերով /	ԱԱՀ** /տառերով և թվերով /	Ընդհանուր գինը /տառերով և թվերով /
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի > փաթեթի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի > փաթեթի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի > փաթեթի անվանում N3>>				
...	...				
...	...				

_____ մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, _____ անունն ազգանունը) _____
 ստորագրողը

Կ.Տ.

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:

¹⁷Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» քառերը հանվում են: ¹⁹Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխային ժամկետը չպետք է պակասի ինչի 365 օրացուցային օրից ²¹Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններն ենթադրյալ առաջացնող գնումներին դեպքում մտնելիս նախադասությունները պայմանագրից հանվում է: ²²Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալու թյան պայմանագիր կնքելու միջոցով: ²³Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիր կնքելու միջոցով:

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան

«___» _____ 2020թ. **

_____ , ի դեմս Ընկերության տնօրեն _____

Ընկերության անվանումը _____ Ընկերության տնօրենի անունը ազգանունը ,
անձնագրային տվյալները , որը գործում է Ընկերության կանոնադրության
հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի
սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը .

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է «Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու)
կողմից կազմակերպված՝ **ՀՊՏՀ -ԳՀ ԱՊՁԲ -20/Է Ա -2** ծածկագրով գնման
ընթացակարգին :

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված
մասնակից , կնքվելիք պայմանագրով նախատեսված
պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ
որակավորման ապահովում , Ընկերությունը , Պատվիրատուին է
ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման
պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից :

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից
ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետև՝ Պահանջագիր)
ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է , որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր
հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում
լրացված «ակցեպտավորված վճարման» համար , որի դեպքում նշված
գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող
/վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված
Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ
համաձայնություն և ստանալու համար , քանի որ Ընկերության
կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝
ակցեպտավորման նպատակով :

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝
Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից
գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման :

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով
Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը
հետկանչելու մասին :

դ) Ընկերությունը հավաստում է , որ Պահանջագիրը
ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով :

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է , որ Վճարող Բանկը
որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից
ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի
իրավաչափության , վավերականության , ներկայացման
ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար
Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների
համար :

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում
կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու
դեպքում , եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից
պայմանագրի միակողմանի լուծման , Պատվիրատուն սույն
տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով
ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր
տեղեկացնելով Ընկերությանը : Սույն տուժանքի
համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային
ստորագրության հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող
Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով , ինչպես
նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով :

1.5 Պատվիրատուն Վճարող Բանկին կարող է ներկայացնել այլ
լրացուցիչ փաստաթղթեր :

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ >>ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն չհասնելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը

Ընկերության հասցեն

Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Կ.Տ

Օր /ամիս /տարի

**Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅԱՆՁԱԳԻՐ*	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	
6. Վճարողի հաշվի համարը՝	
7. Վճարողի ՀՎՀՀ՝	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ԴՈԱԿ	
10. Շահառուի ՀԾՀ (չիլրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 01503224	
12. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարան	
13. Շահառուի հաշվի համարը (հՀ .N) գանձապետարանի հաշվարկային հաշիվ՝ 900018001876	
14. Գումարը (թվերով և բառերով)՝	
15. Ակցիապատվորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցիայի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ / AMD	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ (որակավորման ապահովման համար)	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրակատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցիապատվորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/
24.բ. Կ.Տ.	23.բ. Կ.Տ.
24.գ "___" ___ 20___թ.	23.գ. Վատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին և լրացման կարգի»:

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և
լրացման ուղեցույցը**

3/3	<<Վճարման պահանջագրի>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի / վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված)	Վավերապայմանը լրացնող կողմը՝ 2 ահառու նկատվածարողը (գնումների գործընթացի հետ կապված)
1	2	3	4	5
1.	Փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր	Փաստաթղթի վրան ախապես լրացված է <Վճարման պահանջագրի>
2.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է 2 ահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրը ներկայացնելիս
3.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է 2 ահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:
4.	վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի	պարտադիր	պարտադիր	լրացվում է

	հաշվի համարը		լրացվում է վճարողի քանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպության նում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	վճարողի կողմից
7.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
8.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	լրացվում է վճարողի կողմից
9.	2 անունով անվանում ը, կամ անուն ազգանուն	պարտադիր	պարտադիր լրացվում է 2 անունով հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում է եննաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	նախապես լրացվում է 2 անունով կողմից՝ հրավերով
10.	2 անունով ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր (գնումներին հետ կապված գործընթացում չի լրացվում)	(չի լրացվում)
11.	2 անունով ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ 2 անունով հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է 2 անունով կողմից՝ հրավերով
12.	2 անունով սպասարկող ֆինանսական կազմակեր	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է 2 անունով կողմից՝ հրավերով

	պոլթյան (մասնաճյուղի) անվանումը			
13.	Հահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է Հահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է Հահառուի կողմից՝ հրավերով
14.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է Հահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
15.	Ակցիայատվ որված գումարը՝ (թվերով և բառերով)	պարտադիր	ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցիայատի համար, որը գնումներին հետ կապված չի կիրառվում)	(չի լրացվում է էլ չի կիրառվում)
16.	արժույթը (բառերով և կողմով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
17.	գործարքի նպատակը	պարտադիր	Պարտադիր լրացվում է «այս մանագրի կատարման ապահովման համար» բառերը	նախապես լրացվում է Հահառուի կողմից՝ հրավերով
18.	վճարման կատարման հիմքերը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և Հահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա Հահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող այս մանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը և տ տուժանքի մասին համաձայնագրի,	լրացվում է Հահառուի կողմից
19.	վճարման պայմաննե րը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է <ակցիայատվորված վճարում>բառերը,	նախապես լրացվում է Հահառուի կողմից

			<p>որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար</p>	
20.	առդիր էջերի քանակը	պարտադիր	<p>ոչ պարտադիր լրացվում է պահանջագրի նկից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին) էթել լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է:</p>	լրացվում է 2ահառուի կողմից
21.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	<p>պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդորոշում է թե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում է նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը:</p>	ստորագրվում է վճարողի կողմից կամ դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը
21.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	<p>պարտադիր՝ կնիքի առկայություն, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով</p>	կնքվում է վճարողի կողմից թղթային եղանակով ներկայացնելիս
22.ա.	2ահառուի ստորագրությունը	պարտադիր	<p>Պարտադիր՝ լրացվում է բանկ ներկայացնելիս</p>	ստորագրվում է 2ահառուի կողմից
22.բ.	2ահառուի կնիքը	պարտադիր	<p>պարտադիր՝ կնիքի</p>	կնքվում է 2ահառուի կողմից

			անկայություն դեպքում	կողմից թղթային եղանակով բանկ ներկայացնելի ս
23.ա.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության ընթացային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության ընթացային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.գ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	
24.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ըներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը	

	(մասնաճյուղի) դրոշմակները		դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.գ	շահառուի սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագրի վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սուղն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

Հավելված 5.1
ՀՊՏՀ -ԳՀԱՊՁԲ-20/ԷԱ-2 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի
ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

«_____» _____ 2020թ. **

_____ի դեմս Ընկերության տնօրեն _____

Ընկերության անվանումը _____ Ընկերության տնօրենի անունն ազգանունը, _____
անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՊՏՀ -ԳՀԱՊՁԲ-20/ԷԱ-2 ծածկագրով գնման ընթացակարգին** :

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից :

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետև՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն և ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով :

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման :

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետկանչելու մասին :

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով :

